ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«29» նոյեմբերի 2023թ. N 94 - Լ

ԵՐԵՎԱՆ

ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՕՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՉՍՏԱՑԱԾ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ՍՏԱՑԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 78-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի ապրիլի 13-ի ՀՕ-126-Ն օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 28-ի N 860-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կանոնադրության 21-րդ կետի 15-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել, որ՝

1) 2017 թվականի դեկտեմբերի 16-ից հետո մինչև 2023 թվականի մայիսի 6-ը ազգային անվտանգության մարմիններում ծառայությունից արձակված և չօգտագործված արձակուրդի օրերի համար հատուցում չստացած կամ մասնակի ստացած նախկին զինծառայողները կարող են գրավոր դիմել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ֆինանսական վարչություն՝ հասանելիք հատուցումը հաշվարկելու նպատակով,

2) դիմումը ներկայացվում է նախկին զինծառայողի կողմից՝ կցելով անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

3) հատուցում ստանալու նպատակով ներկայացվող դիմումում պետք է նշվեն նախկին զինծառայողի անձնական տվյալները (անուն, հայրանուն, ազգանուն, ծննդյան օր, ամիս, տարեթիվ), հաշվառման և բնակության հասցեները, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունից արձակվելու ժամկետը, չօգտագործված արձակուրդի օրերի մասին տեղեկություններ՝ ըստ տարիների, բանկային հաշվեհամարը,

4) ֆինանսական վարչությունը դիմումը քննարկում է մեկամսյա ժամկետում,

5) դիմումը քննարկելու ընթացքում անհրաժեշտ տեղեկություններ են ստացվում նաև կադրային, ինչպես նաև համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներից, որտեղ ծառայել է նախկին զինծառայողը,

6) հատուցումը վճարվում է անկանխիկ եղանակով դիմումում նշված հաշվեհամարին դրամական փոխանցում կատարելու միջոցով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ազգային անվտան-գության ծառայության տնօրենի 2023 թվականի հոկտեմբերի 30-ի «Չօգտագործված արձակուրդի օրերի համար հատուցում չստացած կամ մասնակի ստացած ազգային անվտանգության մարմինների նախկին զինծառայողներին հատուցում հաշվարկելու նպատակով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կողմից վարչարարության իրականացման կարգը սահմանելու մասին» N 78-Լ հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Ա. ԱԲԱՋՅԱՆ**